

փայի վերատեսուչ տանս կիլիկիոյ որ եւ Սիս որջորջի Տեառն Տէր Յովհաննէս կաթողիկոսի վասն գծայդրութեան այսմ տառիս որ եղեւ իսկ ձեռամբ փըծուն զրչի Բաղասասարի դպրի և որ յիշէ իշեալ լիցի ի քրիստոսէ աստուծոյ մերո ամէն։ Արդ ես վերջացեալս ամայն բարեաց մեղաւոր և անպիտան ծոռայի ծոռայից աստուծոյ սուտ անուն և անսրժան բաղասասար զըպիրս և անխմաստ զրիչըս ցանկացաւզ եղեալ այսմ աստուածաշունչ տառիս։ Գրեցի զամ ձեռաւք իմագքի ի վայելումն Տէր Յովհաննէս կաթողիկոսի որ և աստուած բարով վայելու տացէ և զինքն անփորձ եւ անսայթաք կենաւք պահեցէ ի պարծանս մեր և ամնայն ազգիս հայոց ամէն։ Եւ մանաւոնդ ընդ արժանաւորաւն իշատակի ազաշեմ իշել ի տէր զգատուական հօգեսոր հայր իմ և զուսուցիչս իմ զամիքսիանոս քաջ քարտուզարն որ բազում աշխատելով զիս այսչափ չնորհի արժանի արար հայցամք ամենազաւրէն աստուծոյ որ զինքն անփորձ պահեցէ ի պառաւութիւն սուրբ Նկեղեցայց և փոխարէն միոյն հարիւրայդպատիկ հազարապատիկ եւ բիւրապատիկ առնէ աստ և հանդերձելումն ամէն։ Եւ դարձեալ երես անկեալ աղաչեմ իշել ի տէր որք աւկտիվութիք ուսմամբ կամ տեսանելով կամ։»

Մնացեալ չի կայ, կան երկու պարտապթուղթիք:

Աւարտելէ առաջ, Բարդէն Սբրազան Անրիպիին յիշատականները տուած ատեն⁽¹⁾ կուտայ նաև Վիեննայի թիւ 113 ձեռոզրին մէկ յիշատակարանը Տաշկան Ցուցակին վրայէն⁽²⁾, սուկայն ան կը մոռնայ տող մը.

Խճ Յափնաննու բանասիրի

Եւ ասկ անուամբ վարդապետի

Առ բա ճնշեամբ իմ Անրիցի

Սնմամբ վարժմամբ կիւլիկեցի, և այլն։

Վիեննայի թիւ 203 Շարակնոցն ալ կը գրուի 1608 ին կեսարիս, «ի կաթուղիուսութեանն Սոսյ Տեառն Տէր Յովհաննիսի»⁽³⁾ Այս վկայութիւնը Սբրազանը բնաւ չի յիշեր։

Wichita, Kansas
U. S. A.

Յ. ՔիիրՏեան

(1) Սին 1930 թիւ 2 եւս 47։

(2) Սին 1930 եւս 48. և Տաշկան Ցուցակ է։

394 Բ սին։

(3) Տաշկան Ցուցակ էջ 525։

ԴԻԿԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

Զ

Մարտիրոս Վրդ. Կաթայի՝ Ռուսուրոյին,
առ. Եղիազար Այնրապյի՝ յերուսաղէմ։

Տրումազգեաց և յոքնաթախիծ սոսպախի, միջակոտորեւ սրտաբեկ հառաչմամբ՝ Տեառնդիմ բաղձալւոյ յուշ առնէ որդի քո յետնաւալ. Այո՛, հա՛յր, զի ընկլուզին զմեղ մեղք միր, սակայն ժոնմք առ բարեկամն աղզի մարդկան, պետն երկնային և զերկլորդելն հայցեմք զաղերսն յասել. Տէ՛ր, մինչեւ յի՞ր ոչ ողորմեցիս յերտասպէմի, և մեզէն իսկ բարձցուք զողոք առ Տէր՝ ոչ մատնել իսպառ և ոչ ցըել զուխտն որ առ հարսն մեր թէ՛ ե՛կ իմ քրտնաջան մշակ, ո՛չ թէ իմ էր սեպհական աւանդն այն. որ և զսոյն հարկի սեն՝ ազի զալարեալ և սիրտ լքեալ, որպէս և է սովորութիւն զրկելոցն ի հայրեննաց, և եթէ զապերախտութիւն ժխտող բամոյ զննեսցիս, նա՛ զի՞նչ ասիցեմ, միթէ չիցե՞ս տեղեակ, որ զփորձ առեալ է՛ կարէ, ասէ, օգնել: Բայց արդ՝ յանդզնութիւն է ընդ վայր խօսս. ոչ այս էին իմաւալոյ պատճառք զմերայոց տարագէմք քայրայումն ի մմմեհանց, ոչ բանիւ և ոչ արդեամբք անմիաբան կելոյն սակի էր յեղելոյս ընդ Տեառնդ անջրելի պանտանդականիւ Տեառն ամրանալս մեծաւ դաշնաւ, զոր և յայն ևս ոխացեալք ոմանք բարիտահացք աղզ և յազգ որոմ բանսարկեալ, մինչ զի զկենդ կամելով ի բարկութիւն շարժել զառ ի մեզ։ Որ և արգեանս ընդ այն յոյժ զոր եմ զՏեառնէ զի ոչ յառաջ և ոչ յետոյ զիապայ ի մէջ կատաղմանց իւրեանց, ապա թէ ոչ ցիմ վերայ բարզիւր այն ևս հասուցի ի Տեառնէ անաստուածիցն այնոցիկ զոր ինչ և արարինն։ Ո՛՛ տայր ինձ ըզթես ըստ Դաւթեայ՝ զի թռուցեալ ժամանէի առ ոսու Տեառնդ մինչչեւ իցեմ մեռեալ. բայց արդ իրը մետաղս իցեմք ամենենքեան յանէ անաստուածին այնմիկ։ Ոչ զիսեն՝ թէ քանեա'ց անպարափ հեղին զանմեղ արիւնս, ի կիրճս շաւզաց կալով աւազակորէն, որ և պատճառք այդ արգելու զմեզ, և ոչ թէ խաթր այլոց հայումն։ Մի՛ այլ և այլ կարծիս զմտաւ ածել, վարդապէ՛տ, չեմք հանգոյն այնց, որ գոյզն ինչ վարկ-

պարագից թողուշ զբարեկամս և յարիլ յայ-
լըս, որպէս և մերս Սուրբ Սարգսայ խոր-
հրդակցացն է տեսանել այժմ։ Զոր ինչ և
գործենն՝ գտնեսցին ի Տեսանէ, այլ մերս
անարժանութիւն ոչ է ըստ ասիցն թէ՝ մե-
ծութիւն տասանայ բարեկամս և աղքատն ի
բռն սիրելոյն զրկի։ այս առակս ոչ է խո-
տելի, բայց ի միջի մերում մի՛ լիցի այս,
որպէս և ասէ մի ոմն յարտաքննոցն թէ՝ ըզ-
մեղու մի՛ վասն խայթոցին ատեր, այլ
վասն պատոյն սիրեա՛, նոյնպէս և զբարե-
կամս՝ ասէ։ Զի՞ յաճախիցիմք ցնորմամբ
այսր և անդր, սիրելի՛, եթէ զմարդկան
հաճութեան սպասեմք՝ ըստ ասիցն, նա՛ ձա-
ռայութեան Տեսոն տարագիր գտանիմք.
այլ արդ զինչ և իցէ ի լուռ եւեթ կալով
տեսեմք ճգանց, տանիմք նեղութեանց,
համբերեմք պանդխոտութեան, ոչ ուռաեքէ
այս թշուառութիւն զառ ի մեզ, եթէ ոչ ի
հինից բանսարկուին։ և ընդ այս պարտիմք
ընդ համբերողին մեծի տանել զշտակրու-
թեանս, մինչև այցելութիւն մի՛ յուստեք
յայտնեսցի, յետ այնորիկ իւրաքանչիւր ոք
զիւրն կամս հաճեսցի։ Մահատսի Սարգսին
ևս առ իս կայ ի թաքրատաղ։ յոյժ բաղձայ
և նա փութալ ի տեսութիւն վեհիդ, այլ ոչ
կարէ փոյթ գալ յաղագս պղծոյն սաստկու-
թեան։ քանի մի՛ օր այլ սպասեմք, միթէ
աղօթք վեհիդ յօգնեալ՝ բարձցի տրումու-
թիւնս։

Նոյեմբերի թ. մ. [1657] ծրաւ, բառես-
ցի սիրով Աստուած Սուրբ Հոգւոյն։

Է

Դազար վրդ. Կիմազօ՛ Կ. Պոլսէն, առ.

Եղիազար Ալիբատղի՛ յԵրևանակէ՛:
(Բա՛ ո՞չ մեջն է բառաւ)

Այնմ ևեթ պարապումն անձինս ըզձա-
ւոյ և բարերարոյ սուրբ հօրդ եղիազար
վարդապետի քաջի բարունապետի արհի՛
զերկոսին զգաստակ ձեռին քո համբաւե-
ցից հանդերձ զգարշապարաւ քով փարեցից,
ողջութեամբ մեծաւ ինձաւ ի Տէր մեր Յի-
սուս Քիսասս միշտ և յարաժամ։ ամէնւ

Ընդ երկրպագելի տաղաչափ ոտիդ սուղ
դոյզն ինչ յայտ լիցի սրբութեանդ, հա՛յը
իմ բարի, զի զանարժանութիւնն ոչ էիր
արեր անտես, այլ յիշելով և միսիթարելով
հանապազ նօմօսիւ քոյով՝ զբարեբարելն քո

յիշատակեմք և օրհնող և աղօթող եմք
միշտ, զի զրեալ էիր վասն զալստեան մե-
րում, ոգւով չափ ուրախ եմք և ջանամք
իրեւ զթոչունս թես առեալ վերանալոյ և
զօրհնեալ քաղաքդ և զտեանակոխ սուրբ
քաղաքիզ զնողն լիզել և զուրբ զարբա-
րանն անարժան աչօք տեսանել և բերանով
համբուրել, գոնէ լինիցիմք արժան, և զօրհ-
նեալ զտիպքդ տեսանելոյ փափաք և կտ-
րօտ եմք, բայց զելս իրաց նկատեմք. զեռ
ևս այսպիսի աղմիի միջի եմք՝ ինայելով
զաթուն սուրբ՝ թէ ողորմութիւն քրիստո-
նէից հասանի ի վանքն խզ ճերաց, այլ սպր-
դեալ խարեբայս այս՝ վասն իմ ծովացեալ
մեղաց եղեւ այս։ Կաթուղիկոսն զիր օրհ-
նութեան քաղաքիս և մեզ էր սուաքեալ
հանդերձ սրբալոյս մեռնաւն՝ սակո նըւի-
րակելոյ զքաղաքս Մինաս վարդապետն
Գաղատիոյ, և մեր թղթին պատճառն ար-
գելման Մինասն եղեւ. և խոռվութիւն, աղ-
մուկ, զժուութիւն բազում եղեւ, և զարպին
Աստուած է զիտակ՝ թէ ո՛րպէս է լինելոց։
Այսափ խոռվութիւնս է ի քաղաքիս, քան
զթումաւինն է աւելի. եկեալ նըւիրակելն
բռնի զքաղաքս նըւիրակել կամի, վաղվեան
աւուր չարն օր ծնանի արաքան աղմի միջի
զպատճառն առ իս ձգելով ըստ կարծեաց
քոյի։ Այն շուն չնացեալ Սիւթձին հայհո-
յի Որգուոյն Աստուածոյ ինչ բանի մէջ մտաւ,
նաև Պիւնեաթ պիզճքն և Սիմոն կախարդն
ապականեցին զաշխարհս, ամենայն զեկե-
զեցեաց քակելու սէպէպ նորա եղեն։ եթէ
Հոգին Սուրբ անօրինէ արժանանալ տեսու-
թեան հօրդ իմոյ բարույ՝ մի ըստ միոցէն
զեկուցանեմ զիսորհուրդ սրտիս՝ թէ ո՛րպէս
անցք անցին ի տեղս յայս, և ոչ է զրով
արկաննելի. մեր եղբայր Յովուկի վարդա-
պետն և Տէր Մարտիրոս սիրելի սուաքիչն
քո՝ ի նմանէ տեղեկացիր զամենայն։ Այլ
և զուրբ հօրդ զիսրատն հայրաբար և բա-
րեկամբարար յանձն առնում, ոգւով և մար-
մով ի հնազանդութեան և ի ծառայութեան
կեամ, միշտ ծառայ եմ և եղեց և անձն-
իշխան կամօք քեզ մինչև յելս չնչոյս։ Մեր
ջանքն այլ այս է եթէ զերծանիմք յայս
չարեացու՝ երես ի քարչ, բոկ սուամբ և զըլ-
խարց զալու եմ ի ծոցս քո և երկրպա-
գութիւն սուրբ անօրինականաց և տեսու-
թիւն սուրբ եղբարցն սմիննեցուն և Սու-
րբիս վարդապետի և ներսէս որգուոյ։ և

աղօթք և օրհնութիւն ձեր անպակաս լիցի
ի վերայ մեր . և խնդրեմ ի յապենիազ բարե-
րարէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ զքեզ ընդ
երկայն աւուրս պահեսցէ իրրե զջահ անշե-
ջանելի բազմահոյլ եղբարք՝ ի պարծ անս
համայն հայկական տոհմի և ի պայծ առու-
թիւն սուրբ գամբարանի և աշակերտելոց
մանկանց սուրբ եկեղեցւոյ: Այսքանս բա-
ւեսցի . առ այս ողջ լ'ր , ողջազուրեալոց ի
Հոգւոյն Սրբոյ: Ծրեցաք ի զընտանի միջի
յունուար իւն . օրի: Դազար ծառայ քո եր-
կըրպագէ զզարշապարս քո զերկոսին . ծա-
ռայ քո եմ ես՝ ծառայ և որդի աղախնոյ
քո , արա՛ զիս իրբե զմի ի վարձկանաց քոց .
ամէն , ամէն . եղիցի , եղիցի: Դարձեալ մեր
հոգեոր հօր Տէր Տարդամին մահունեւոյ և
խօճա Մուրատ եղբօր մերոյ ողջոյն մատու-
ցանեմք . Ստեփաննոսի և Սարդին պապայիս
և այլ եղբարց ամեննեցուն ծառայ եմք:

Հրատարակից՝ Մ . Ե . Ն .

“ՄԱՅՐ ՑԱԽԱԳԻՆ,,

Տառապանքիդ առջեւ անզօ՞
Խոնարհուեն եւ մենաւոր ,
Քե՛զ կ'ալորեմ սրտի խորեն ,
Ո՛վ երկնաւոք Մայր լուսեղին :

Դու , զբրառա Մայր Թագունի ,
Ուզեկուրոյ Ասուածունի ,
Ճանչար վիշը այլ տոկացի
Եւ նեզուրեամբ զայն կրեցիր :

Զարշարանին հանդէպ Ռեգուրի ,
Լըռեցուցիր լաւերն նոգւոյդ ,
Եւ անզանզա՞ խաչին ոսիին ,
Հաւաննեցար Տիրոց կամքին :

Մահր գրկած բեւերուդ մէջ՝
Բորբոնեցիր սիրոյ անձէջ
Ասրուանիք՝ դու մայրական
Կուրծքիդ ներքեւ անյեղական :

Դու , Մայր բանեաց , մեզ ցոյց արւիր
Կենաց ուղին ուր անբախի
Պէսէ կ խլիեն , միւս անցրտունց
Եւ հաս՝ մինչեւ մեր վերջին ունին :

ԱՄԵՆ. Ս. ՊՈՏԻՐԻՈՐՔ ՀՕՐ Ճ Ա. Ռ Ե

Իր Նախագահութեամբ առաջին անգամ
զումարուած Միարանական Հնդին . Ժողովոյ
մէջ :

Դիրացնորէ , Հոգեշնորէ և Բարեշնորէ

Միարանակիցք իմ , Եղբարք և Սիրելիք ի
Քըլիսուսու:

Երեք ամիսներէ ի վեր ձեր մէջ եմ արդէն ,
առանձնած՝ պարտականութեանց լուծը , զոր
Պատու Միարանութիւնոց աւելի քան ութ ամիս-
ներ կանուխ առաջարկած էր ինձ իր բարեհան
ընտրութեամբը , յիս ժամանանի ամէնուուգ . և իմ
անուունալի և ամէնարժան հօր , օրոյ և իր
բարու երանաշնորհ նախորդաց յիշատակն օրհա-
նեալ յատիսեան:

Թոյլ տրուի ինձ . այս առթիւ , երբ առաջին
անգամ կը նախագահամ զիս ընտրութ ժողովոյդ
դումարմանը , անգամ մը ևս յայտնել զգածուած
սրտիս շնորհակալութիւնը , իմ մասիս յայտ-
նուած վատահութեան համար :

Բարութեանց Տէրը շնորհէ՝ ամէնուուգ և ինձ
կեանք և հոգի բարի , կարենալու համար կա-
տարել մէր պարտականութիւնքը և արդարա-
ցնել ազգին ակնկալութիւնները :

Եթէ գէթ տարի մը բոլորած լինէր արդէն
պաշտօնի ձնոնարկելս ի վեր , պիսիս պարտա-
կանութիւն նկատէի և կարենայի իսկ կատար-
ուած աշխատութեանց համարատուութիւն մը
ներկայացնել այսօր այս Աթոռէն՝ ամէնուուգ և
Ազին իսկ Բայց եռամսիայ ժամանակամիջոց
մը հազիւ թէ պիտի բաւէր ճանչնալու և ըմ-
բռնելու համար այսպիսի գարաւոր և բարդ
Հաստատութեան մը կարդքները , և զանոնք գո-
հացնելու համար հարկաւոր եղած միջոցներն ու
կարելիսութիւնները : Հետեւարար թո՞ղ ներուի
ինձ՝ եթէ փոխանակ հաշիւի , իմ պաշտօնիս՝ այ-
սինքն ազգին այս նուիրական Տան վերաբեր-
մամբ իմ պարտականութեանցս մասին իմ ըմ-
բռնուումս միայն կարող կ'ըլլամ յայտնել այժմ
քանի մը բառերով:

Դիզուածաւ չէ որ Տուն կոչեցի այս գարա-
ւոր յարկը . իմ համազումս է արդարե թէ ա՛յդ
է անոր ամենէն բնորոշի նկարգիրը . գործի
կամ շահու հալորդութեամբ հաւաքուած ան-
դամներու ընկերակցութիւն չենք հոս , այլ նուի-
րումի ուխտով զոյաւորուած եղբայրութիւն մը ,
որ եկած է հոս ապրիլ և իրագործել հաւատքի
և սիրոյ կեանքը :

Աստուծոյ վառքը և ազգին սէրը . այս զոյգ
զայցումներուն մէջ է որ կը կայանայ այս Տան
ոզին կամ նպատակը : Աստուածապաշտութիւն և